

Մի ֆանի սրբագրութիւններ Փաւստոսի եւ Փարպեցու մէջ

1. Վաղարշ հազարապետ.

Յուսիկ կաթուղիկոսի օծման համար իբր ուղեկից գնացող նախարարներն մասին խօսելով՝ Փաւստոսը (Գ. ԺԲ.) ասում էր «Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին, զմեծ հազարապետն ի հազարապետութեանն: Իսկ ի տոհմէ՝ ամենայն Հայոց մեծաց, ՂՎաղարշ, որ էր իշխան Անձտայ. և ընդ նմա Զարեհ իշխան . . . »: Շքախումբի գլխաւոր անձն՝ այն է հազարապետի անունը յայտնի չէ այստեղ, մինչդեռ միւս երկրորդական իշխանների անունները մի առ մի և մանրամասն յիշուած են:

Այս անունները թուելուց յետոյ՝ Փաւստոսը շարունակում է. «Զնոսա զամենեւեան հրամայեաց երթալ ընդ մեծի հազարապետին Վաղարշու, զի նստուսցեն զերանելին Յուսիկ . . . »: Այս տողերից երևում է, թէ հազարապետը Վաղարշն է. հետևեցնում եմ, թէ վերի տողերի մէջ կայ մի սխալմունք. Վաղարշ Անձտայ իշխանը և հազարապետը նոյն անձերն են. սխալը կը վերանայ, եթէ յիշեալ պարբերութեան միջից ջնջենք վերջապէտը և կէտադրենք հետևեալ ձևով. «Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին, զմեծ հազարապետն ի հազարապետութեանն իսկ ի տոհմէ՝ ամենայն Հայոց մեծաց, ՂՎաղարշ, որ էր իշխան Անձտայ: Եւ ընդ նմայ Զարեհ . . . »: Այսպէսով իսկ բառին «բայց» նշանակութիւնն էլ կը վերանայ, որ շատ անտեղի է, և կը դառնայ «ըստ, ընկի». Վաղարշը հազարապետների ընկի տոհմիցն էր: Երկրորդ՝ «ի տոհմէ՝ ամենայն Հայոց մեծաց» անիմատ խօսք է, որովհետեւ այս տեսակ տոհմ գոյութիւն չունի. այժմ այս անտեղութիւնը կը վերանայ, տոհմը անցնելով հազարապետութեան: Երրորդ՝ նախորդ պարագային՝ հազարապետը և Վաղարշ՝ երկու տարբեր անձեր համարուելով, ընդ նմա եզակի ձևը անյարմար էր և սկէտք էր հասկանալ ընդ նոսա. այժմ այս սրբագրութեամբ՝ եզակի ձևը շատ պատշաճաւոր է:

Այս սրբազրուօթիւնը տալիս է մեզ նաև մի կարևոր տեղեկութիւն հին հայոց ազնուապետութեան մասին, այն՝ թէ հազարապետութեան պաշտօնը ի բնէ յատուկ էր Անձապ իշխանական տոհմին:

2. Ասամ իօխան Գողթան.

Նոյն հատուածի մէջ յիշուած նախարարների շարքում կայ նաև մէկը՝ որ կոչւում է «Ասամ իշխանն Գողթան»: Ասամ անունը ուրիշ տեղից ծանօթ չէ ինձ: Բայց մի քանի տեղ կայ Ասատ անունը. այսպէս Ասատ Գնունի՝ Արշակ Գ-ի նախարարներից մէկը (Խոր. Գ. ԽԳ.), Ասատ Խոռխոռունի՝ Մօրիկ և Փոկաս կայսրների ժամանակ (Սեբ. 2. Ի.), Ասատ Եպս. Տայոց՝ Բարդէն կաթողիկոսի ժամանակ (Գիրք թղ. Ը): Որովհետև երկաթագիր գրութեան մէջ մ և ռ յաճախ շփոթւում են միմեանց հետ, ուստի ենթադրում եմ, որ այսպիսի մի շփոթութիւն տեղի ունեցած է նաև այստեղ, և Ասատ ձևը դարձած է Ասամ:

Յիշենք՝ թէ նոյն հատուածի մէջ է նաև յայտնի «Մերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց», որ հին ճառքնորենների վկայութեամբ Միաբանը սրբազրեց Տիրոյ:

Երկուսի մէջ էլ սխալը նոյնն է:

3. Խարոյ.

Փարպեցի էջ 167—8 կարդում ենք. «Եւ բայց թէ ապա և որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խաբող հացկատակաց ջոկն էր...»: Խաբող անծանօթ բառը Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1906, էջ 205 սրբազրում է խաբող: Այս սրբազրութիւնը շատ ուղիղ է, որ և աւելի համոզիչ կը դառնայ, եթէ ի նկատի ունենանք Փարպեցու մէկ ուրիշ նման հատուածը՝ «որով մերկացեալ դիմօք՝ պատրողական հացկատակացն երեւցան կերպարանք» (էջ 169), ուր պատրողական-պատրեւ վերևի խաբող-խաբեւ բառի հոմանիշն է:

4. Գիւս Վահեունի.

Վարդան Մամիկոնեանի հետ Աղուանից երկիրը պատերազմելու դնացող նախարարների մասին խօսելով Փարպ. ԼԳ. տալիս է հետևեալ անունները, «Եւ սպարապետն Հայոց տէրն Մամիկոնէից երանելին Վարդան, առեալ ընդ իւր ի տանուտերացն Հայոց, որք ջերմեռանդն սիրով ձեպէին մարտիրոսու-

Թեան ժամուն պատահել, որը էին այսօրիկ. Խորէն Խորխոռունի, Արշաւիր կամարաւիան, և Քաթուլ Դիմաքսեան, և Արտակ Պալունի, և Գիւտն Վահեունեաց, և Հմայեակ Դիմաքսեան...»: Վերջընթեր անունի տեղ ձեռագիրն ունի «և գունդն Վահեունեաց», որ հրատարակիչները դարձրել են «և Գիւտն Վահեունեաց»:

Գիւտ Վահեունին յիշուած է թէ՛ Եղիշէի և թէ՛ Փարպեցու մէջ մի քանի անգամ (Եղիշ. մատ. էջ 33, 71, Փարպ. ԻԳ. ԻԵ, 1,2): Աս մէկն է այն նախարարներէ՝ որոնք մասնակցեցին Արտաշատի ժողովին՝ պատասխանելու համար Յադեբաի նամակին և յետոյ Դուռը կանչուելով՝ առ երեսու ուրացան իրենց հաւատը: Այնուհետեւ Գիւտ Վահեունի բաժանուեց ուխտապահներէց և միացաւ Վասակեանց խմբին:

Նառ տարօրինակ է լսել մի այդպիսի ուրացեալ նախարարի համար թէ «ջերմեռանդն սիրով ձեպէին մարտիրոսութեան ժամուն պատահել»: Աւելի տարօրինակ է դառնում երբ հեղինակը պատմում է քիչ յետոյ՝ որ Աղուանք գնացող նախարարները, (որոնց մէջ և Վահեունին), լուր ստացան՝ թէ Հայաստանի մէջ Վասակ Սիւնին և նրա հետ Տիրոց Բազրատունի, Գաղիշոյ Խորխոռունի, Գիւտ Վահեունի և այլն, ստել են իրենց երգման և անցել Պարսից կողմը (Փարպ. 1,2): Վերջին հանգամանքը ստիպում է մեզ սխալ համարել հրատարակիչներին մտցրած սրբագրութիւնը. ուղիղ է ձեռագիրն «և գունդն Վահեունեաց» ընթերցուածը: Աւելացնենք նաեւ այն՝ որ յատուկ անուան վրայ դրուած յօդը (Գիւտն), ինչպէ՞ս նաեւ ազգանունների ուղղական հոլովների շարքում յանկարծ ընդմիջուած սեռական հոլովաձեւը (Խորխոռունի, Կամարաւիան, Դիմաքսեան, Պալունի, Վահեունեաց, Դիմաքսեան) անախորժ են և կը ջնջուին բնագրի ընթերցուածով:

Ընդունելով «գունդն Վահեունեաց» ընթերցուածը, կը տեսնենք՝ որ Վահեունի ցեղը բաժանուել է երկու մասի, մի մասը (ըսեն գունդը) անցել է Վարդանի կողմը, իսկ նոցա նահապետը (Գիւտ)՝ Վասակի կողմն է: Այս հանգամանքը թող չզարմացնէ մեզ, որովհետեւ նոյնը պատահում է նաեւ միւս նախարարութեանց հետ. օրինակ՝ Խորխոռունիներից Խորէնը ուխտապահ է, Գաղիշոն ուրացեալ, Պալունիներից Արտակ ուխտապահ է, Վարադշապուհը ուրացեալ: Նոյնը հաստատում է նաեւ Եղիշէն (Մատ. էջ 77), որ յիշելով Վարդանանց պատերազմին մասնակցող նախարարների անունները, ի մէջ այլոց դնում է «և գունդն Վահեունեաց», ճիշտ Փարպեցու ձեռագրին նման և առանց նախարարի անունի:

2. ԱՏՐՈՐՄԻՊԳ մարզպան.

Վարդանանց պատերազմից յետոյ Յաղկերար կանչելով Մուշկան նիւսալաւութիւն, «զԱտրորմիպգ ոմն անուն, յաշխարհէն Հայոց, մարզպան հրամայէր թողուլ, որում յանձն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց չընդոստուցանել» (Փարպ. Խ.): «Յաշխարհէն Հայոց» պէտք չէ հասկանալ «հայ, հայազգի», բայց պէտք չէ նաև ուղղել «յաշխարհին Հայոց»: Ատրորմիպգ՝ թէև պարսիկ, բայց բնակուած էր Հայաստանում կամ պարսիկ բանակի հետ եկել էր Հայաստան: Այս բանը ցոյց է տալիս «թողուլ» բայը:

6. Զանգակ երեց.

Փարպ. 12. ուրացեալներէ բանակում յիշում է երեք կրօնաւորներէ անուն. «Զանգակ մի ոմն, Սահակ ձայնող, և միւս ոմն Պետրոս երկաթի» Մի ոմն բառի մասին առաջին հրատարակիչները կարծում են՝ թէ Զանգակի աղաւաղեալ մականունը լինի. նոր հրատարակիչները (Միաբան և Մալխասեան) յաջող կերպով ուղղում են. «մի ոմն Սահակ ձայնող, և միւս ոմն Պետրոս երկաթի»: Իսկ Զանգակ անունը կարծում են աւելորդ և կամ Զայնող մականունան մէկ ուրիշ հոմանիշը: Այս վերջին կէտը համարում եմ սխալ: Նոյն ուրացեալ քահանաների անունները տալիս է նաև եղիշէն (Մատ. էջ 71). «երէց մի Զանգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւազ մի Սահակ անուն»: ուր Զանգակը՝ պարզ և յայտնի ձևով յիշուած՝ ջնջում է ամէն մի կասկածանք:

7. Արեկ Գաբելեան.

Փարպ. 12. Վասակին կողմնակից նախարարների շարքում յիշում է «իշխանն Արեղենից՝ Արտէն»: Զեռագիրն ունի այստեղ Արմէն, որ թէև այժմ ծանօթ անուն է, բայց հնումը չկար: Հրատարակիչները իրաւամբ ուղղել են Արտէն:

Նոյն Արտէն իշխանը ծանօթ է նաև եղիշէն, որ (Մատ. էջ 71) յիշում է նրան՝ ուրացեալ նախարարների շարքում «իշխանն Գաբելենից Արտէն անուն»: Զեմ կարծում՝ թէ լինի որ և է պատճառ՝ տարբեր համարելու նաև «զԱրտէն Գաբելեան», որ ըստ Փարպ. Խ. Ատրորմիպգ մարզպանի հրամանով և ուրացեալ Վարադշապուհ Պալունու հետ միասին գնաց կոտորելու Հմայեակ Մամիկոնեանի դունդը Տայոց աշխարհում:

Այս երկու յիշատակութիւնները ցոյց են տալիս՝ թէ

Փարպեցու առաջին ընթերցուածը սխալ է և պէտք է ուղղել «Իշխանն Գարեգինից՝ Արտէն»:

8. Իսա Առաւելեան.

Յազկերտի հրամանով Պարսկաստանում բանտարկուած նախարարների շարքում կայ նաև Առաւելեան ցեղից մէկ իշխան, որ տպագրեալ Փարպեցու մէջ ունի Դատ ձևը (Փարպ. Խէ): Զեռագիրն այստեղ շատ աղաւաղուած է. «Ի տոհմէն առաջին Առաւելեանից Փափակ և Վարազ գենդաղ»: Ա. տպագիրը այս անունները ուղղել է Վարազդէն և Դաղ. իսկ միւս երկու տպագրութիւնները դարձրել են Դատ, որին հետևում է և վերջին տպագրութիւնը: Իշխանը ծանօթ է նաև Եղիշէին (Մատ. էջ 150), որ ուղղակի դնում է «յազգէն Առաւելեանից Փապակ և Վարազգէն և Դաղ»: Այս պատճառաւ Դատ սրբագրութիւնը վաղաժամ եւ համարում:

9. Տէր Նոյն.

Փարպեցի, թուղթ (էջ 202) խօսելուց յետոյ Մովսէս փիլիսոփայի և նորա կրած հալածանքների մասին, յիշում է և մի այլ կրօնաւոր՝ որ նոյնպիսի հալածանքներով վախճանուել է: Տպագիրն այստեղ ունի այսպէս. «Զհրեշտականման այրն զՏէր՝ նոյն անհանդիստ հալածանօք վախճանեցուցին»: Կրօնաւորի անունն է ուրեմն Տէր, որ՝ ինչպէս գիտենք, Ե. դարում յատնի անուն էր. հմմտ. Տէր Խորձենացի (Խոր. Գ. ԾԴ. Փարպ. Ժ), Տէր Եպս. Կամենահան (ըստ իս այսպէս ուղղել Կոր. Մատ. էջ 14 «տէր Եպիսկոպոսն ի կայենաւանսն»):

Պր. Արքահամ Զամինեան կարծում է թէ տէր այստեղ հասարակ անուն է, իսկ կրօնաւորի յատուկ անունն է Նոյն. սրան իբրև տպացոյց ծառայում է ո՛չ միայն նոյն բառի մի քիչ անյարմար դործածութիւնը (փոխանակ ասելու «նոյնպիսի անհանգիստ հալածանօք»), այլ և գլխաւորապէս ձեռագրի ընթերցուածը: Զեռագիրն ունի «հրեշտականման այրն զտէր Նոյն: Անհանգիստ հալածանօք վախճանեցուցին»: Առանձին վերջակէտ դնելը և յաջորդ բառերից բաժանելը անշուշտ եղած է խորհրդով, և նպատակ ունի ցուցնել թէ Նոյն յատուկ անուն է:

Նոյն իբրև յատուկ անուն յիշուած է մէկ ուրիշ անգամ էլ Բուդ. Դ. դ. իբրև իշխան Ծովաց, որ ուղեկցեց Մեծն Ներսէսին Կեսարիա ձեռնադրութեան զնալու ժամանակ:

Նորագիտ բառեր Սերէոսի մէջ.

1. Շագոյր.

«Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ընդ ուռ իւր *): Ապա կայր մարմին նորա ի մէջ դիականցն, և մատուցեալ՝ առ յինքն զշագոյրն. և տեսանէր զի կայր ի նմա տուփ մի արծաթեղէն և խաչ մի ի մէջ նորա՝ յորում կայր մասն մեծ ի տէրունեան խաչէն»: (Սեր. ԺԶ. էջ 62):

Շագոյր բառը ուրիշ տեղ չի պատահում. Հայկազեան բառարանը չգիտէ. Առ ձեռն բառարանը իւր անստոյգ ձև յիշում է շագոյր «մախաղ»: Սերէոսի վկայութիւնը՝ որ այլ ևս տեղիք չի թողնում կասկածի, ցոյց է տալիս, թէ բառը նշանակում է «պայտուտակ», շագոյր մաշկեղէն «կաշուէ տոպրակ»:

Շագոյր բառին կարելի է կցել շարագոյր, ում. շարագոյր «կանանց գլխի թաշկինակ, գրքի կող կամ շապիկ» (տես Հայկ. բառ.): Շագոյր կարող է լինել շարագոյրի կրճատ ձևը:

2. Հաւայ.

«Քանզի տեսանելով զհաւայս նորա չարաչարս, զարհուրեալ խոտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ» (Սեր. Գ. էջ 41): (Խօսքը Մուշեղ Մամիկոնեանի մասին է, որ զսպեց Վահրամ պարսկի ասպտամբութիւնը և մեծամեծ քաջագործութիւններ տրաւ. Պարսիկները նախանձեցան նորա վերայ և ամբաստանեցին թագաւորի առաջ):

Հաւայ՝ ուրիշ տեղ չգործածուած անծանօթ բառ է. ըստ իր նշանակում է «քաջագործութիւն, յաղթութիւն»:

3. Վերեւումուս.

«Ապա ի վերուստ իմն հասեալ օգնութիւն՝ պատառի վերտեւամուտ բաճիկ և կուռ զբահին ամբութիւն արքային Քուշանաց ի նիղահէն Ամբատայ»: (Սեր. ԺԷ. էջ 67):

Բահլիկ անծանօթ բառը Պատկանեանը մեկնում է «տարազ զբահագործութեան». իսկ վերտ և ամուտ համարում է «թերևս ի վերտ բառէն բարդեալ»: Պէտք է ուղղել վերտ և ամուտ: Վերտ «ամուր» մտքով գործածուած է զբահի համար՝ նաև ուրիշ տեղեր. հմմտ. Զրահս վերտս զգե-

*) Զեռագիրն ունի ուս ընդ ութիւր. որը Պատկանեան ուղղում է այսպէս. քայք լաւագոյն է օրրագրիկ ուս ընդ անութիւր:

ցեալ. Ա. Թագ. Ժ. 5. Եւ ինքն վառեալ վերտ պահպանա-
կօք, ուր ոչ դժէին նեաք. Խոր. Բ. 26:

4. Սրիան.

«Եւ մինչդեռ սորա ճակատեալ էին դէմ յանդիման դալ
և մերձենալ առ միմեանս, իսկ բնակիչք դաւառին՝ որ էին
Ժողովեալ ի բերդն Երզնայի, և ելեալ անտի բաղմութեան
մանկուոյ գերանդօք և սրիանօք անկան ի վերջոյ նոցա, և
դորժեցին մեծ օճիւ վնասուց, Թողին վիւրաւորս» (Սեր. ԻԲ.
էջ 74):

Սրիան բոլորովին անծանօթ բառ է, որ բառարանները
չգիտեն. գերանդի բառի յարադրութիւնը ցոյց է տալիս, թէ
նշանակում է «մանգաղ»:

Հետաքրքիր է մեզ համար այս բառը յատկապէս նրա՝
համար, որ մասնաւոր բառը հայերէն չէ և ասորական փոխա-
ռութիւն է համարւում:

5. Յանկումուքի.

«Եւ թշնամուոյն հատեալ զամբռութիւն՝ անկաւ ի բա-
նակն. և անհնարին լինէր կոտորածն. և նոցա հատեալ զտեղի
մի, ոմանք հետեակք և ոմանք հեծեալք յանկումուքի ձի,
ելին և դնացին փախստական» (Սեր. ԻԲ. էջ 75): Ձեռագիրը
ունեցել է յանկումումուքի, որ չգիտեմ ինչու տպագրում
ուղղում է յանկումումուքի: Այս ձևից դնում է նաև Առձ.
բառ. յանկումումուքի բառ, «յանկարծ» նշա-
նակութեամբ: Հեծեալք բառը պահանջում է նախդրիւ
հայցական. ուստի թերևս սրա համար է որ Առձ. դնում է
յանկումումուք, յաջորդը կարգալով ի ձի. իմ կարծիքով ան-
կումումուքի ածական է ձի բառին, և թերևս «տրմուզ, կըր-
մուզ» բառերի հետ նոյն է (խամ, անվարժ ձի). և ահա այս
պատճառաւ աւելի մէտ եմ ձեռագրի ընթերցութիւն:

6. Աճառեան.

